

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՃԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՅԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Գերմանական նոր կայսրը.—Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Առողջապահութեան դատաւարութիւնը ու-
սումնաբաններով. Դերբին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Իրանական հարցը. Նամակ Շվեյ-
ցարիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—
ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայ-կաթոլիկութեան մուտքը
Վրաստան և վրացական հայ-կաթոլիկները.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՅՐԸ

Հեռագիրը մեզ այդչէն լուր բերեց որ գեր-
մանական հանդուգնեալ կայսր Վիլհելմ I-ի
անդրանիկ որդի Ֆրիդրիխ, որ մինչև այժմ
կրօնաբեր (թագաւորան) անունը կրեց
կրօն, հօր մահը իմանալուն պէս Բեռլին
վերադարձաւ իտալիայի Սան-Րէմօ քաղաքից,
որտեղ նա բժշկվում էր, և նստեց գերմա-
նական կայսերական և Պրուսիայի թագա-
ւորական գահը Ֆրիդրիխ III-ի անունով:
Նա Վիլհելմ I կայսրի և Աուգուստա կայ-
սրուհու որդին է և ծնվեցաւ 1830 թվին,
ուրեմն այժմ 58 տարեկան է: Տնային ու-
սում ստանալուց յետոյ, Ֆրիդրիխ իշխանը,
գեռ շատ երիտասարդ ժամանակ մտաւ
գերմանական Բօնն քաղաքի համալսարանը
և աւարտեց այդտեղ իր ուսումը: Բօննի
համալսարանում նա աշխատասէր կերպով
յաճախում էր պրօֆեսորների դասախոսու-
թիւնները և ապրում էր համեստ ուսանողի
պէս: Նա պատկանում է գերմանական իշխան-
ների այն սերունդին, որոնք յարգելով Գերմա-
նիայի մտաւոր կեանքի փառաւոր անցեալը,
խաղաղութիւնը, մտաւոր կեանքը, գիտու-
թիւնը, արհեստը, գեղարուեստը,—աւելի
բարձր են դասում ազգերի խաղաղ արդիւ-
նագործական զարգացումը, քան թէ արիւ-
նահեղ պատերազմները: Նա թէև անձամբ
քաջ է և մասնակցում էր բոլոր մեծ պա-
տերազմներում, որ իր հօր կենդանութեան
ժամանակ մղվում էին թէ Աւստրիայի, թէ
Ֆրանսիայի դէմ, բայց, ինչպէս պատմում
են, շատ անգամ յայտնել է այն միտքը թէ
Բեթովենի սօնատի հնչիւնները իրան ա-
ւելի հաճելի են, քան թէ զէնքի ձայնը:
Ֆրիդրիխ III պատկած է անգլիական
թագուհի Վիկտորիայի աղջկայ, իշխանուհի
Վիկտորիայի հետ: Նոր կայսրը գեռ թագա-
ւորանք եղած ժամանակ յայտնի էր որպէս
իշխան Բիսմարկի ներքին ձնշող քաղաքակա-

նութեան հակառակորդ և ամենքը գեռ յի-
շխան ինչպէս թագաւորանքը 1863 թվին
Դանցիգ քաղաքում եղած ժամանակ, իր
արտասանած խօսքի մէջ բացարձակապէս
յայտնեց իր զգոհութիւնը այն միջոցնե-
րի դէմ որ իշխան Բիսմարկ գործ է դը-
նում գերմանական մեծուկի ազատութիւնը
ձնշելու համար: Գեռ թագաւորանք ե-
ղած ժամանակ նա իրան ցոյց էր տալիս
միշտ ամենաջերմ պաշտպան սահմանա-
դրութեան և այժմ կայսերական գահը
նստելուն պէս, Ֆրիդրիխ III հաւատարմ
մնաց իր ուղղութեան: Նրա հրատարակած
մանիֆէստի մէջ, ինչպէս հաղորդել է հե-
ռագիրը, խոսվում է հայրենիքի խաղաղ ար-
դիւնագործական զարգացման, ազգի մտա-
ւոր և հոգեւոր կեանքի զարգացման մա-
սին, սահմանադրութեան պահպանութեան
մասին,—և ոչ թէ անվերջանալի պատե-
րազմների պատրաստութիւնների մասին:

Նոր ար պատկերացի երևելի կատարել
նորերում պատասխանելով Բիսմարկի պա-
տերազմական, ամենքի վրա ահ ու դող
գցող խօսքին, յայտնեց իր խօսքի մէջ այն
միտքը թէ մարդկութիւնը պէտք է զօրեղ
լինի մտաւոր, հոգեւոր կեանքով արդիւնա-
բերութեան խաղաղ զարգացմամբ և ոչ թէ
պատերազմով և թնդանութիւնով—գերմա-
նական մամուլը, շողորդութիւնը Բիսմարկին
անուանեց կատարելի իրաւայի ձառը
«դատարկախօսութիւն»: Ի՞նչ կասեն այ-
ժմ գերմանացիք, տեսնելով որ իրանց նոր
կայսրը իր մանիֆէստի մէջ արտայայտում
է նոյն առաջադէմ, հակապատերազմական
և հակաբիսմարկեան մտքերը, որ արտա-
յայտել էր և կատարել էր որ մի երկու
շաբաթի առաջ գերմանացի յանդգնեցան
«դատարկախօսութիւն» անուանել:

Ֆրիդրիխ III-ի կինն էլ, ինչպէս վկա-
յում են, մեծ ներգործութիւն ունի իր
մարդու վրա: Նա անգլիուհի է և ինչպէս
յայտնի է անգլիուհի միշտ գիտնալ գեր-
խաղաղ քաղաքական կեանքի մէջ: Վիկտո-
րիա իշխանուհու իղէալն էր միշտ անգլի-
ական ազատ սահմանադրութիւնը, անգ-
լիական ազատութիւնը: Այդ է պատճա-
ռը, որ գերմանական յետադէմ կուսակցու-
թիւնը ատելով ատում էր թագաւորանք-
դին և նրա անգլիուհի կնոյ: Նորերում
թագաւորանքի հիւանդութեան ժամա-
նակ, իտալիայի Սան-Րէմօ քաղաքում ե-
ղած միջոցին, Բիսմարկի կուսակցութիւնը
ամեն միջոց էր գործ դնում թագաւորա-

նական համոզելու, որ նա զահեղ հրա-
ժարվի յօգուտ իր որդու, Վիլհելմ իշխա-
նի, որի թագաւորութիւնը աւելի ձեռն-
տու կը լինէր յետադէմ կուսակցութեան,
քան որ այդ երիտասարդ իշխանը դաս-
տարակված է միմիայն գիտութեան ու-
ղով և նշանակութիւն չէ տալիս մարդկա-
յին մտաւոր կեանքի պահպանման ու
մարդկային կուսութեան կեանքին: Նա
էր Բիսմարկի պէս, մարդկութեան կեանքի
ամբողջ բարիքը տեսնում էր միմիայն
թնդանութիւնը որոտումների մէջ:

Եւ ահա այժմ, երբ նոր կայսրը, հին
Գերմանիայի այդ համարելի ներկայացու-
ցիչը, գերմանական ազատ փիլիսոփայական
ոգու, գերմանական գիտութեան, մտաւոր
ազատ կեանքի, ազատ սահմանադրութեան
պաշտպան, Բեթովենի, Շուբերտի, Գեթէի,
Շիլլերի այդ պաշտոնը, Բօննի համալսա-
րանի հին ուսանողը նստել է գերմանա-
կան գահը և անմիջապէս սկսել է մաքա-
ռել միլիտարիզմի դէմ—Բիսմարկ, որ քա-
նի մի օր առաջ, իր փառաւոր ձառից և
պարամիշտութեամբ ունեցած իր աշոգութիւ-
նից յետոյ, երբ պարլամենտը միաձայն
քուէակցեց գիտութեան նոր կրեդիտը,
Բիսմարկ որ մի քանի օր առաջ կատարե-
լապէս առողջ էր,—այժմ յանկարծ հի-
ւանդ և ծեր է դառնում իրան և կարօտ է
հանգստութեան:

Գերմանական ահագին ներգործութիւն
ունի և եւրօպական միւս պետութիւնների
վիճակի վրա: Երանի թէ նոր կայսր Ֆրիդ-
րիխ III-ի բռնած համակրելի քաղաքակա-
նութիւնը վերադարձնելով Գերմանիային
իր առաջվայ քաղաքակրթական փառքը,
ներգործէր և միացած Եւրօպայի վրա,
վերջ դնելով այժմ ամեն տեղ տիրող միլի-
տարիզմին և հիմք դնելով մի նոր և փա-
ռաւոր դարաշրջանին, այն է՝ մարդկային ա-
ռաջադիմութեան, խաղաղ քաղաքակրթու-
թեան և ազատութեան դարաշրջանին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԴԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ՈՒ-
ՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են, որ
Պետերբուրգի մանկավարժական թանգարանի

ձեռնարկ է, որ այդ կրօնատեղ և ջերմուհանդ
հայ-կաթոլիկները, բացի կրօնական դադափա-
րից, ոչինչ առանձին բարձր ձգտումն չունեն
կեանքի մէջ: Եւ ընդհանրապէս չու հնազանդներ
էին լատին պատերների ձեռքում, բայց և այնպէս,
մի քանի պայծառ օրինակներ ապացուցանում
են, որ ներկայ հայ-կաթոլիկները նախնիքը ու-
նեցել են նշանաւոր չափով հասկացողութիւն
մարդկային եկեղեցու նշանակութեան մասին, որը
կարող էր բռնել նաև ազգայնութեան դադափա-
րի տեղը:

Նրանք հաստատապէս պահել էին հայ-կաթո-
լիկաց բոլոր սովորութիւնները, և աւանդութիւն-
ները: Նոյն իսկ թիֆլիսի հայ-կաթոլիկների եկե-
ղեցին շինված էր բուն հայկական ճարտարապե-
տութեամբ, եկեղեցու ներսի զարդարանքները,
սրբոց պատկերները, արձանաքարերը, գերեզմա-
նաքարերի արձանագրութիւնները, բոլոր հայկա-
կան էին և մաքուր հնութեան դարաշրջանը պահա-
ծելով հայկական վարչական եղանակաւ. հայ-
կական բոլոր ծէսերը, արարողութիւնները և ժա-
մակարգութեան եղանակը անխափան կատարվել
են հայ-կաթոլիկների եկեղեցու դարեւոր սովորու-
թեանց համաձայն:

Այդ բոլոր հետաքրքրելի փաստերը կատարե-
լապէս ապացուցանում են, որ թիֆլիսի ներկայ
հայ-կաթոլիկների նախնիքը, աւելի ձեռնարկ կրօ-

նահիճում փետրվարի 1-ին կայացաւ տարրական
կրթութեանը նպատաւը ֆրեյդելեան ընկերու-
թեան ընդհանուր ժողովը: Այդ ժողովում բժշկա-
պետ Գօրինէլսկի կարգաւ մի հետաքրքրի բեֆե-
րատ «Առողջապահութեան դատարարակի» և կըր-
թիչ նշանակութեան և դրա տարածման ամենա-
լաւ միջոցների մասին: Դատարար մասնագիտ
արաւ այն բանի վրա, որ այժմեան դատարարա-
կութեան զլխաւոր սխալը կայանում է նրանում,
որ զլխաւոր ուղղութիւնը դարձնում է մտքի
զարգացման վրա, իսկ կադմուսալի ֆիլիկական
կողմը անտես է առնում: Դրանով է բացատր-
վում և այն տխուր փաստը, որ ազգայնակու-
թեան կուսութեան մասերում, չը նայելով ա-
ռողջութեան համար ունեցած նպատաւոր պայ-
մաններին, առողջութեան յետադիմութիւն է նը-
կատվում:

Բոլոր հետադադողները,—յայտնեց դատարար,
հաստատում են, որ այդպիսի երևոյթիւնների պատ-
ճառը մարդու հոգեկան և ֆիզիկական ոյժերի հա-
ւասարակշռութեան խախտումն է, այսինքն, որ
մասնակցների հոգեկան ոյժերը չափազանց լարում
են, իսկ ֆիզիկական ոյժերը անտես են առնում:
Առատարակ ժամանակակից կուսութեան մար-
դու կեանքը չէ համապատասխանում բնութեան օ-
րէնքներին: Մանկութեան ժամանակ երեխային
փաթաթում են, աչքի լոյսի նման են պահում, նրա
խաղի վրա նայում են որպէս դուրսնութեան վրա.
ուսումնաբանում ոյժից վեր մտաւոր աշխատանք
ունի մանուկը, որի նպատակն է յիշողութիւնը զար-
գացնել: Այդպիսի կրթութեան հետեանքն է ջղային
թուլութիւն, թագաւորանք, վաղահաս ծերութիւն
և հոգեկան հիւանդութիւն: Աղջիկների դրութիւնը
աւելի ևս վատ է: Նրանց մօտ ձնշում են ֆիզի-
կական ամեն շարժողութիւն: Զարմանալի չէ
ուրեմն, որ այդպիսի տղամարդկանց և կանանց
շարժապից ծնվում են նիհար և մաշված երեխա-
ներ, որոնք աննորոգեալ են կեանքի կուր: հա-
մար: Այդ դեռ քիչ է. այդպիսի դատարարակու-
թեան հետեանքը հասարակութեան ֆիզիկական
և բարոյական բնաշինը լինելն է: Յիշուալ, ժա-
մանակակից կեանքը պայմանները շատ փոխվել
են. քաղաքակրթութեան առաջադիմութեան շը-
նորհով մտաւոր աշխատանքի մեծ պահանջ կայ,
և մրցումը չափազանց զարգացել է. բայց քաղա-
քակրթութիւնը բոլորովին մեղաւոր չէ մարդկա-
յին թշուառութիւնների մէջ—մեղաւորը մարդ-
կանց տգիտութիւնն է և այն, որ նրանք չը գիտեն
օգտվել բնութեան օրէնքներով: Բժշկական օգնու-

նասէր և ջերմուհանդ հայեր են եղել, քան թէ
նրանց ներկայ լուսաւորեալ սերունդը, որոնք
իրանց մարդկային եկեղեցին բոլորովին բարձի թողի
արած, ընկել են աւելի նիւթապաշտ շահաւորու-
թեան ետեւից միայն...

Մինչև 1830 թվականը, ամբողջ կովկասում ոչ
մի կաթոլիկ ուրիշ ազգութիւններ չը կային, բացի
հայ-կաթոլիկներից:

Ձիւղութեան ծառայութեան մէջ եղած փոք-
րաթիւ կաթոլիկները միայն յաճախում էին հայ-
կաթոլիկաց եկեղեցին, որովհետեւ ուրիշ տեղեր
չունէին կրօնական պէտքերը հոգալու համար:

Լեհաստանը անմիջապէս նուաճելուց յետոյ
միայն բաղմադան դօրքի մէջ կաթոլիկ դաւանու-
թեան պատկանողները, որոնք համար յետոյ միայն
պէտք եղաւ զինուորական քահանայ և եկեղեցի
հաստատելու համար: Կովկասի մէջ, լատին կա-
թոլիկների եկեղեցիք հիմնվեցան, Ստաւրապոլում
1816 թ., Վլադիկավկասում 1868 թ., Պետերբուր-
գում 1844 թ., Թեմիւր-Սան-Շուրայում 1850 թ.,
իսկ Մանգլիսի, Բագուի, և Սոդուտի մէջ հաստա-
տեցան փոքր մատուռներ զինուորական պա-
հանջի համեմատ: Նոյն իսկ Ալաւլիայի և Մոզ-
դոկի եկեղեցիները, որոնք լատին եպիսկոպոսի
հրատարակած օրացոյցի մէջ չեն յիշված, հայկա-
կան են և հիմնած առաջինը 1743 թ., իսկ վեր-
ջինը 1818 թ.:

1830 թվականից անմիջապէս յետոյ, թիֆլիսի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ-ԿԱԹՈՒԼԻԿՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՏԵՐՔ ՎՐԱՍՏԱՆ ԵՒ
ՎՐԱՑԱՆԹՍ ՀԱՅ-ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԸ

(Նիւթեր հայ-կաթոլիկութեան պատմութեան)

Վրաստանը վերջականապէս միացրած էր ու-
սաց կայսրութեան հետ 1801 թ. յունվարի
18-ին:

Մինչև այդ ժամանակ, ինչպէս ցոյց տուինք,
Վրաստանի մէջ եղած կաթոլիկները ազգու-
թեամբ հայեր են եղել, ինչպէս այդ ապացուց-
ված է հանդուցեալ Բեթլի աշխատութեանց մէջ:
Լատին կապուցին պատերները, թէև աշխա-
տեցան կաթոլիկութիւնը տարածել նաև վրաց
ազգի մէջ, բայց տիրող եկեղեցու կողմից
հակառակութեան հանդիպեցան, որի համար և
արտաքուլիցան Վրաստանից 1755 թվականին
Փոքրթուրք, անշան վրացի եղած կաթոլիկնե-
րը միանգամայն վերադարձան մայրենի, ուղ-
ղափառ եկեղեցու մէջ, և իսպառ անհետացան
կաթոլիկութիւնից:
Կաթոլիկութեան մէջ մնացին միմիայն վրացա-

Թիւրք հիւանդութիւնները չէ քաջանում Ամենից օգտաւէտ այդ հանգամանքում կարող է լինել առողջապահութիւնը, — մի գիտութիւն, որ ուսումնասիրում է մարդու կենսական ոյժերի հաւասարակշռութեան և տնտեսութեան օրէնքները և որոշում է այդ ոյժերի ամենալաւ պահպանութեան օրէնքները: Հասարակական առողջութեան վերաբերմամբ պետութեան ձեռք առած ամենալաւ միջոցները իրանց նպատակին չեն հասնի, մինչև որ հասարակութեան մեծամասնութիւնը համակրութեամբ չը վերաբերի զրանց և այդ բանին կարելի է հասնել միայն այն դէպքում, երբ առողջապահութեան հիմունքները աւելի շատ կը տարածվեն ժողովրդի մէջ: Թէ որքան մեծ նշանակութիւն ունի առողջապահական գիտութիւնը հիւանդութիւնների առաջին առնելու համար երեւում է, որինք, նրանից, որ ֆրանս-պրոսական պատերազմի ժամանակ, առողջապահական պայմանների բարելոման շնորհիւ, զօրքի մէջ մահացութիւնը 8 անգամ պակաս էր, քան թէ Ղըրիմի պատերազմի ժամանակ, չը նայելով ժամանակակից հրադէպների աւելի կործանիչ ազդեցութեանը:

Դասախօսի կարծիքով առողջապահական գիտութեան ընդարձակ տարածմանը արդելում են հետեւեալ պատճառները. 1) դուալիստական հայրաքաղաք մարդկային ընտելեան վրա քրիստոնէական աշխարհում ի Ֆիաս նրա ֆիզիկական կողմի (այլ կերպ էին նայում մարդու ընտելեան վրա յոյները և հռոմէացիները, և այդ պատճառով նրանց պատանդների դատարարութիւնը ևս ուրիշ բնուածութիւն ունէր). 2) առողջապահական օրպէս ինքնուրոյն գիտութեան համեմատական նորութիւնը, և 3) մարդկանց մէջ այն համոզման բացակայութիւնը թէ հասարակութեան շահերը և հասարակութիւն կանոնաւորման անհատների շահերը մի և նոյն են: Մարդիկ աւելի զգայուն են միայն դէպի յանկարծակի դժբաղդութիւնները, օրինակ, պէսի ճեղքը, երկրաշարժը և այլն, քան թէ դէպի խրոխտական դժբաղդութիւնները: Այդ բոլորը ցոյց է տալիս, թէ անհրաժեշտ է տարածել առողջապահական հիմունքները: Դասախօսի կարծիքով, մանկութիւնը և պատանեկութիւնը ամենալաւ հող են ներկայացնում առողջապահական տարածման համար. դրանք դատարարակցիւով առողջապահական կանոններով, իրանք ամենաանհրաժեշտ տարածողներ կը դառնան այդ գիտութեան: Այդ գիտութիւնը ունի թէ կրթիչ և թէ դատարարակիչ նշանակութիւն (դասախօսը մանրամասնաբար զարգացրեց այդ միտքը): Առողջապահութիւնն ուսումնասիրած մանկավարժը նախ և առաջ կօգտուի զրանից իր սանիկների առողջութիւնը պահպանելու համար. երկրորդ՝ նրանց մէջ առողջապահական լաւ սովորութիւններ զարգացնելու համար, և երրորդ՝ նա կարող է մանուկների հետաքրքրութիւնը շարժել դէպի ընտելեան և մարդկային կենսի երեւոյթները, զարգացնելով նրանց մէջ ընդունակութիւն քննողաբար վերաբերվելու դէպի այդ երեւոյթները և ուսուցանելով նրանց գնահատել հասարակական և անհատական առողջութիւնը: Այդ

պատճառով, բացի առողջապահ-բժշկներից, կենսի մէջ առողջապահական գիտութիւն տարածողներ կարող են լինել և առողջապահութիւնը գիտականապէս ուսումնասիրած մանկավարժները: Սակայն առողջապահական ոգով դատարարակցութիւնը պէտք է սկսել մանկական հասակից. այդ կողմից առողջապահական ամենալաւ տարածողները պէտք է լինեն առողջապահական գիտութիւնը ուսումնասիրած մայրերը, մանկական պարտիզպանութիւնները և ուսուցչուհիները: Ի նկատի առնելով այդ, բժշկապետ Գօրի-նեկովի խորհուրդ է տալիս առողջապահութիւնը աւանդել բարձրագոյն, միջնակարգ և ստորին բոլոր դպրոցներում, ի հարկէ, իւրաքանչիւր ուսումնարանի աշակերտների զարգացման համապատասխան պրօգրամայով:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, մարտի 2-ին, Նորին Մեծութեան Թաւառը կայսրի վահակութեան տօնի օրը լինելով, Թիֆլիսի բոլոր փողոցները զարդարված էին դրօշակներով և բոլոր դաւանութիւններին պատկանող տաճարներում գոհացողական մաղթանքներ կատարվեցան: Երեկոյան քաղաքը լուսաւորված էր:

Փետրվարի 25-ին, առաւօտեան ժամը 7-ին կուր դեղը Թիֆլիսում քանդել էր կապած դեղանները և իրար հետ կապած երեք հատ գերանների վրա մնացել էին երեք հողի վրացի դերան բերողներ: Երբ այդ երեք վրացիներին ջրի հոսանքը հասցրեց մինչև Հաւաքարի կամուրջը, այդ մարդկերանց արդէն մահ էր սպառնում, եթէ Չուքաւովի ջրարկանաբայի հայ մշակները չը փրկէին այդ երեք ողորմելիներին, պարան դեղով նրանք, օրի միջոցով խեղդելովները ջրից դուրս հանվեցան դէպի ափը:

Հիւսիսային գործակալութիւնը հեռագրում է մեզ Պետերբուրգից, որ ղեկավարական-ծովային դատարանը քննելով «Կոստոմա» շոգենավի կործանման դոքը, անմեղ ճանաչեց շոգենավի կառավարիչ Կաշալովին իր ղեկավարութեանը յանձնած շոգենավի կործանման դոքը, և Կաշալովի բոլոր կարգադրութիւնները թէ մարդկերանց և թէ բռնելը փրկելու վերաբերմամբ դատարանը գիտութեան-ծովային կանոններին կատարելապէս հանաճայն ճանաչեց:

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են փետրվարի 27-ից հետեւեալը: «Տեղիս նաւահանգստում երկու օր առաջ նորից կործանվեցաւ 18.000 մոդուլ կերօսին բարձած մի նաւ: Այդ պարանքը պատկանում էր Իրիւնէր և ընկերութիւնն առեւտրական տանը և ապահոված էր»:

Մեզ գրում են ԲԱԹՈՒՄԻՑ, որ այդտեղ հացահատիկների դրութիւնը առաջվայ պէս թոյլ է: Յօրենի ամենաշատը տեսակի գինը 1 բուրլ է, մինչև 1 ր. 12 կ.: Եգիպտացօրները արժէ 70—

72 կ., գարին 65—70 կօպ:

ՔԱՐՎԱՆԱՐԱՑ գիւղից մեզ գրում են: «Մեղանում աղջիկ փախցնելը արդէն արմատացած սովորութիւն էր, բայց այժմ ուրիշ տեղերից էլ են գալիս երիտասարդներ և մեղանից աղջիկ են փախցնում: Այդպէս, օրինակ, այս օրերս մի դիւլիցնի տղայ փախցրեց այստեղից մի աղջկան, որի հետ սիրահարված էր, և որին ծնողները ուղղաւ մարդուն էին ուղարկում: Եւ տարաւ աղջկան դէպի իր ծննդավայրը, Դիլիջան գիւղը: Երիտասարդը փախցրեց իր սիրուհուն ուղիղ այն ժամանակ երբ վերջինի հայրը բացակայ էր տանից»:

Փետրվարի 22-ին պետական խորհրդում քննվեցաւ, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագրները, ժողովրդական լուսաւորութեան միջնադպրոցների ընդհանուր դպրոցները նոր տեսակի դպրոցներով փոխարինելու մասին Այդ նախագիծը դեռ անցեալ տարվանից, նոյն իսկ պետական խորհրդի ցանկութեան համեմատ, ենթարկված է մի քանի փոփոխութիւնների:

Փետրվարի 26-ին Թիֆլիսի Վարժարանների փոխադարձ օգնութեան ընկերութեան» կայացած ընդհանուր ժողովում, — որի ժամանակ արժարժեք հարցերի, ինչպէս և ընկերութեան գործունէութեան մասին մեք մանրամասնաբար առանձին կը խօսեցը, — ընկերութեան նախագահը ընտրվեցաւ իշխանուհի Թուսանեան, իսկ քարտուղար՝ օր. Յարութեան: Ընտրվեցան և վարչութեան մի քանի անդամներ: Ընկերութեան հաշիւներից երևում է, որ անդամների թիւը 1888 թվ. յունվարի 1-ին հասնում էր 167-ի: 1887 թվականի ընդհանուր վարժարանների ընկերութիւնը մուտք ունեցել է 2,544 բուրլի 92 կօպէկ. իսկ ծախս եղել է 1,941 բուրլի 83 կ. կօպէկ: Յիշեալ թվականի ընթացքում ընկերութիւնը իր անդամներից 24-ին օգնել է դրամական փոխառութեամբ:

Դրամատիկական թատրոնում, մարտի 1-ին, կայացաւ մի հայերէն ներկայացում յօգուտ Զէյթունի հրկիզանների խաղացին կրիլովի «Գերդաստան» պիէսան, պ. Չալկեանի թարգմանութեամբ: Խաղին մասնակցում էին թէ մշտական խաղացողներ՝ ինչպէս պ. Չալկեան, Օրդուբաթեան, Մանդինեան և Թիֆլիսի Չալկեան, այնպէս և սիրողներ՝ օր. օր. Մուրադեան, Քամուլեան, Ղալուսեան, Սողաւեան և պ. պ. Մամիկոնեան, Ալահիլբեկեան և Վարժիկեան: Կրիլովի «Գերդաստան» պիէսան ուսաց բեմի վրա վաղուց յայտնի է, իսկ հայոց բեմի վրա առաջին անգամն է խաղացվում: Պիէսան թէ և չունի բեմական աչքի ընկնող առանձնայատկութիւններ և նրա մէջ դուրս բերած մի քանի տիպերն էլ թէ և մասամբ անհասկանալի են մեր հասարակութեան, բայց և այնպէս նա կարողանում է շարժել նայողի հետաքրքրութիւնը, և սկզբից մինչև վերջ շնչում է ներդաշնակ ընտանեկան կենսի լաւ կողմերի վրա, որ և կազմում է գրուածքի

չին կարողացել նախատեսել այն բարոյական մեծ վնասը, որ այժմ տեղի է ունեցել նրանց եկեղեցու վարչութեան մէջ, երբ այժմ, լատին հոգևորականութիւնը բացարձակ իրաւունք է համարում ժողովուրդների եկեղեցու մէջ այնպիսի անօրինութիւններ անել, և այնպիսի իրաւունք բանացնել, որը նոյն իսկ լատինական եկեղեցու կողմից մի քանի անգամ ժողովներով արդէն ընդունված է, ձեռք չը տալ հայ-կաթոլիկ եկեղեցու իրաւունքներին, որպէս արեւելեան եկեղեցու կանոնական իրաւունքի Աւելի տխուրն այն է, որ Թիֆլիսի հայ-կաթոլիկները մինչև այսօր չարուհակ չեն ունեցել այնպիսի քահանայներ, որոնք անվաճ լինէին հայ-կաթոլիկներին դադարաւորով, որոնց համար պարզ դաւանութիւն լինէր հայ-կաթոլիկ եկեղեցու անցեալ պատմութիւնը, ուղղութիւնը, ոգին, և եկեղեցական ինքնուրոյնութեան անսխալ վարդապետութիւնը և այն հասկացողութիւնը ունենային ճանաչելու Հռոմի դարեւոր քաղաքականութեան ոգին և այն ձգտումները, որոնք դէպի արեւելեան եկեղեցիք առհասարակ, և մասնաւորապէս դէպի մեր, հայ-կաթոլիկացիներն են: Երբ արդէն պարզած է և յայտնի մեր ժամանակակից եկեղեցական պատմութեան մէջ:

հիմնական միտքը: Պիէսան, ի հարկէ, աւելի հասկանալի կը լինէր, եթէ խաղացողները լինէին հմուտ և փորձված դերասաններ, բայց խաղացողների մեծ մասը սիրողներ էին, որոնք, ամենքն էլ, պէտք է խոտովանել, բարեխղճութեամբ էին սովորել իրանց դերերը (հաղուադու երևոյթ մեր սիրողների մէջ) և աւելի անշուք լինում ունեցան, քան թէ շատերը սպասում էին: Մշտական խաղացողները, մասնաւորապէս իրանց դերերը լաւ կատարեցին: Սիրողների վրա խիստ աչքով նայել, ի հարկէ, չէ կարելի. օր. Մուրադեան (Օլգայի դերում) և պ. Մամիկոնեան (Վարժիկի դերում) չը փչացրին իրանց պատասխանատու դերերը: Օր. Քամուլեան իր տիպիական դերում, կարելի է ասել լաւ էր. օր. Ղալուսեան (Զէյնա) միանգամայն իր դերի մէջ կը լինէր, եթէ միայն Զէյնայի տիպը վերցրած լինէր հայոց դաւաճական կենսի մէջ ճնշված աղբիւններից: Անաշուք չէր և պ. Ալահիլբեկեան, որ շատ անգամ մասնակցում է սիրողների ներկայացումներին: Ներկայացումից յետոյ տեղի ունեցան կենդանի պատկերներ և երգ, — բայց անաշուք: Պիէսայի թարգմանութեան լեզուն պարզ և հարթ է, թէ և սիրողներից մի քանիսը շփոթվելով դոք էին անհամարձեց: Դարձուածքներ և բառեր, որ հայերէն չէին: Թատրոնը կատարելապէս լի էր, այդ շատ ուրախալի է, որովհետեւ ներկայացումը բարեկեցական նպատակով էր, այն էլ Զէյթունցիների օգտին:

Մարտ ամսին Պետերբուրգ պէտք է դնայ ուսուցչական գործընկերների կողմից մի պատգամաւորութիւն, որը, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագրները, պէտք է լինի ֆինանսների միջնադպրոցների ընդհանուր օգնութեան արտասահմանեան գինիների վրա մարտահարկը:

Հայ դերասանները, որոնք, ինչպէս անցեալ անգամ հաղորդեցինք, երկու մասի բաժանված վարդապետներ տօնի օրը, պէտք է մի և նոյն օրը, մի և նոյն Վարդան Մամիկոնեան պիէսան ներկայացնէին երկու տեղ. այն է դրամատիկական թատրոնում և Առեւտրական կուրթի դահլիճում: Վերջապէս հասկացան իրանց սխալը, և միանալով այսօր, մարտի 3-ին, կը ներկայացնեն Կարինեանի Վարդան Մամիկոնեան պիէսան, դրամատիկական թատրոնում: Ներկայացումը մասնակցում են Թիֆլիսի համարեա բոլոր հայ դերասանները: Խաղից յետոյ կը լինեն կենդանի պատկերներ պիէսայից վերցրած, իսկ խաղի ընթացքում կը լինի խմբական երգեցողութիւն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՐԱՆԻԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Անգլիական պահպանողական միւնիստրութեան օրով, ըստ երեւոյթին, մոռացութեան արված իրանական հարցը անդադար գիտնում է դէպի իր

մէջ շատացաւ հայ-կաթոլիկների թիւը, մի և նոյն ժամանակ բաւական նշանաւոր թիւով կաթոլիկ ուրիշ աղղութիւններ էլ բազմացան քաղաքի մէջ, և քանի որ չը կար լատինական եկեղեցի, բնական է, որ պէտք է յաճախէին հայ-կաթոլիկաց եկեղեցին:

Բազմաթիւ ֆրանսիացիներ, գերմանացիներ, չեխներ, իտալացիներ և լհացի կաթոլիկներ մուտք ունենալով հայ-կաթոլիկների եկեղեցին, բընականապէս պէտք ունէին նաև լատին հոգևորականի, այդ պատճառով, լատին հոգևորականների մուտքը այդ եկեղեցում կատարվեցաւ. բոլորովին հասարակ կերպով, որովհետեւ, 1844 թվականում, բոլոր կապուցին պատերները կովկասից աքորելուց յետոյ, երբ դադարեցան կամենիցի, Լվովի, և Մոզիլի հայ-կաթոլիկ եպիսկոպոսական թեմերը, և երբ վախճանվեցաւ Ախալցխայի հայ-կաթոլիկաց հոգևոր կառավարիչ հայր Պ. վ. Դահուլեանը, ուսաց կառավարութիւնը, Հռոմի պապի հետ ունեցած դաշնագրի զօրութեամբ 1847 թ. յուլիսի 22-ին, կովկասում եղած բոլոր հայ-կաթոլիկ հոգևոր վարչութիւնը յանձնեց Սաւատովի լատին եպիսկոպոսին, ժամանակաւորապէս և որոշ կանոնական իրաւամբ, մինչև ունենալու համար հայ-կաթոլիկ թեմական եպիսկոպոս (Сводъ Заг. Томъ 11, Ст. 75. Օրէնքների

ժողովածու օտար դաւանութեան վերաբերեալ): Հասկանալի է, որ Տիւրապովի լատին եպիսկոպոսը, որպէս թեմական վիճակաւոր, ազատ էր այնպիսի անօրինութիւններ անել, որ Թիֆլիսի հայ-կաթոլիկների եկեղեցին հետզհետէ կորցրեց իր հայկական բնաւորութիւնը, և դառաւ լատինական եկեղեցի, որին ընդդէմ չէին, ցաւ է խոստովանել, նոյն իսկ ծխական հայ-կաթոլիկները: Լատին հոգևորականութիւնը, ժամանակաւորապէս հաստատվելով հայ-կաթոլիկների եկեղեցում, հետզհետէ այնքան առաջացաւ, որ այժմ լիապէս տեղ է հայ-կաթոլիկ եկեղեցուն, մերժելով հայ-կաթոլիկական ծէսը, արարողութիւնը, ժողովրդական ընտրողական սկզբունքը և ներքին վարչութիւնն եղանակը նոյն իսկ հայ-կաթոլիկ ծխականների համար, որը, ի հարկէ, հակառակ է թէ հայ-կաթոլիկ եկեղեցու իրաւունքներին, և թէ օրինաց:

Այնքան ցաւալի չէ, ի հարկէ, որ Թիֆլիսի հայ-կաթոլիկների եկեղեցու մէջ իրաւունք են ձեռք բերել և հայ-կաթոլիկների իրաւունքներին բռնաւորում են լատին եպիսկոպոսից նշանակած լատին պատերները, այլ աւելի ցաւալի է, երբ նոյն իսկ Թիֆլիսի հայ-կաթոլիկները հեռացած են այնքան գիտակցութիւնից, կրօնասիրութիւնից, և հոգեպէս այնքան թուլացած են, որ բոլորովին

Մեղաւոր չէ, ի հարկէ, ժողովուրդը այն դէպքում, եթէ նա դարերի ընթացքում մեծացել և մնալ է իրօնական նեղ զաղափարով, որին դատարարակց են կրօնական միակողմանի ուղղութեամբ, ժողովուրդը եթէ չունի իրաւացութիւն ընտրութիւն անելու եկեղեցական կառույցի մէջ, եթէ նա անտեղեակ է պատմութեան յաջորդական օրէնքներին, այդ դէպքում հասկանալի է, որ ժողովրդի աղգային ինքնաճանաչութեան դադարեց, ցեղական զգացմունքները ժամանակի և հանգամանքների ազդեցութեան տակ կարող են միշտ թուլանալ և սպառվել, եթէ չը յայտնվի այն առողջ գիտակցութիւնը, որը գիտութիւնը տարածել է ամեն տեղ կրօնի և աղգայնութեան առանձնայատկութեան մասին հաւատարմապէս:

Հետեւալ յօդուածով կաշխատենք պարզել Թիֆլիսի հայ-կաթոլիկ ժողովրդի իրաւունքները և նոյն պարտականութեան խնդրել, որը միանգամայն հակառակ չէ նաև Հռոմի եկեղեցու իրաւունքը:

Ալեքսանդր Գրիգորյան

կանոնաւոր և արդարացի վիճակը. ներկայումս այդ թշուառ երկրի ապագայ բարօրութեան խնդիրը մի նոր շրջանի մէջ է մտել: Լոնդոնի համայնք-ները ժողովում զգալի կերպով աւելացել է իր լանդական ինքնավարութեան կողմնակիցների թիւը: Վերջին օրերում կատարված նոր ընտրութիւնները Անգլիայի մի քանի կողմերում զգալի կերպով ցոյց տուեցին, թէ ինչպէս աճել է երկրի մէջ զարգացող գաղութարի համակրութիւնը. ընտրողները իրանց այդ համակրութիւնը արտայայտեցին ձայների ահալէն և անսպասելի մեծա-թանցով ընտրելով ոչ թէ միայն սոսկ զը-լադստոնականներին, այլ և այնպիսի զարգացող-կաններին, որոնք յայտնի են իբրև իրանդական ինքնավարութեան երդուեալ կողմնակիցներ: Դո-քա ամենքն էլ ի հարկէ, համայնքների ժողովում մի այնպիսի մեծ ոյժ կը կազմեն, որի դէմ զը-ժուար կը լինի միջոց Սալուբրի միջնորդութեա-նը: Իրանդական իրաւունքներն և ինքնավարու-թեան յայտնի պաշտպանողներն ևս, Պարնէլ, Օ-Բրիէն և զոքս միւս կողմնակիցները այդ բանը շատ լաւ գիտէին, և նոյն իսկ իրանք յայտնե-ցին նորերումս, որ իրանդական ինքնավարու-թեան խնդիրը մի նոր շրջանի մէջ է մտնում: Օ'Բրիէն, որ նորերումս միայն ազատվեցաւ բան-տից և մեծ ցոյցերի արժանացաւ, իր մի ընդար-ձակ ճառի մէջ, որ նա խօսեց բազմաթիւ հասա-րակութեան առաջ, ասեց, որ օրանքից յետոյ իր-լանդական ինքնավարութեան պաշտպանները կա-րող են մտնել համայնքների ժողովը ոչ թէ իբրև թշնամու բանակ, այլ իբր մի այնպիսի տեղ, որտեղ նսած են բազմաթիւ գաղափարակիցներ և որ այժմանից սկսած Անգլիայի և իրանդիայի շահերը կապվում են մի գոյնը կապով:— և այդ բոլորը այն ջանքերի շնորհով, որ դործ դրեց Գլադստոն իր համակրողների հետ միասին եր-կար տարիների ընթացքում: Անգլիական դործիչ-ները համակրութիւնը, ի հարկէ, նոյն իսկ խա-ղաղ ճանապարհով կարող է տալ իրանդիային այն բոլորը, ինչ որ նա ուզում էր ձեռք բերել կատաղի կռուի միջոցով:

Ուշադրութեան արժանի է, ի հարկէ, որ իր-լանդական հարցի այդպիսի զորեղ պաշտպանները սկսում են բարեկամաբար նայել անգլիական բա-ղաքականութեան ներկայացուցիչների վրա,— դա, ի միջի այլոց, ցոյց է տալիս, որ Անգլիայում արդէն բաւական հասունացել է իրանդիայի ինք-նավարութեան խնդիրը: Իսկ դրանից շատ շուտով կարող է ծնունդ առնել նոյն իսկ այն ինքնավար-րութիւնը, որի համար դարերով աշխատում է իր-լանդիան:

ՆԱՄԱԿ ԵՎ ԼԵՑՈՒՄՆԵՐ

Յիւրիւն, 14/26 փետրվարի

Քիչ չեն այն քաղաքները, ուր ձմեռայ երկար ամիսներին հասարակութիւնը իր աղատ ժամե-րում յաճախում է միմյանի երկկողմեան, պարահան-դէսներ, դիմակահանդէսներ և այլն: Եւ գուցէ հա-կառակ իր ջերմ ցանկութեան, առիթ չունի իր այդ աղատ ժամերի մի տասներորդ մասը նուիրելու իր ներքին աշխարհի թարմութեան և մշակութեան յաճախելով և երբեմն այնպիսի հիմնարկութիւն-ներ, որոնք տալիս են նրան մտաւոր և հոգեկան անուշիւ բայց դոնէ՛ տարախալի է, որ կան նոյն-պէս քաղաքներ, ուր երբեք մոռացութեան չէ տրվում հասարակութեան այդ կարեւոր պահանջը, այլ ընդհակառակն արժանաւոր անձնատուութիւններ նախօրը խորհում և կարգադրում են այդ մասին:

Չուարթ չվէյցարացիին, որի սիրտը նոյնպէս շատ զգայուն է երաժշտութեան և ուրախու-թիւնների, իր աղատ ժամերը ամբողջապէս չէ նուիրում զրանց, որովհետեւ նրան մի ներքին պահանջ է դարձել և իր մտքի ու հոգու անուշ-գը:

Կեռ ձմեռայ սկզբին արդէն յայտարարված էին տեղական լրագիրներում այս ձմեռ Յիւրի-լում տեղի ունենալիք դասախօսութիւնների մա-սին: Շատ երկար կը լինէր մեզ մի առ մի յիշել այն բոլոր դասախօսութիւնները, որոնց մի մասը այս ձմեռայ ընթացքում արդէն կարգացվել է և մի մասը դեռ կարգացվելու է: Բայց մօտառ-րապէս մի գաղափար կազմելու համար այդ դա-սախօսութիւնների մասին, աւելորդ չէր լինի, դոնէ՛ գլխավորները յիշեցու: Նախ քաղաքային խորհրդարանի դահլիճում համախառնակ ուսուց-չականները կարգացին չաղաքական դասախօ-

սութիւններ: Այդ ութ միմանցից տարբեր նիւթ ունեցող դասախօսութիւնների մուտքը միասին արժէր 6 ֆրանկ, իսկ ուսանողների համար 3 ֆրանկ: Խորհրդարանի դահլիճը, այդ դասախօ-սութիւնների ժամանակ, միշտ լի էր հասարա-կութեան: Շվէյցարացիին, որ վաղուց բազմակող-մանի ուսումնասիրել է իր հայրենիքի իւրաքան-չիւր անկիւնը, գիտնական նպատակով այցելում է իրանից շատ հեռու գտնված երկիրներ: Որպի-սի հետաքրքրութեամբ լսում էր հասարակութիւ-նը, երբ ամբիօն էին բարձրանում այն ուսուցչա-պետները, որոնք դեռ մի քանի ամիս առաջ, այցելելով հեռու երկիրներ՝ անձամբ տեսել, գիտել էին այն ամենը, որոնց մասին այժմ դա-սախօսում էին. ինչպէս օր.— «Ժողովրդական տարրը և ժողովրդական կեանքը Բէլճիոն կը զը-լուծէ», «Ֆրանսիական գաղթականութիւնը Տու-նիսում», «Համապարփորդութիւն հարաւարե-կան Աֆրիկայում» և այլն և այլն: Գիտնա-կան նպատակով այդ ճանապարհորդողները բերել էին իրանց այցելած երկրներից շատ հարուստ բազմատեսակ ժողովածուներ, իւրաքանչիւր դա-սախօսութեան ժամանակ դահլիճը ներկայաց-նում էր մի հետաքրքիր ցուցահանդէս բոյսերի, կենդանիների և ուրիշ բազմաթիւ իրեղենների:

Գասախօսութիւնների երկրորդ շրջանը, հա-մախառնակ մեծ սրահում գերմաներէն լեզուի և գրականութեան ուսուցչապետը ձրի կարգում էր իր դիտողութիւնները «Եւրոպայի և նրա գրեւծ-ները», բազմաթիւ ունկնդիր հասարակութեան մեծամասնութիւնը կազմում էին գլխավորապէս կանայք: Այս դասախօսութիւնները թեւով տասն էին, որոնք կարգացվում էին երեքշաբթի երեկո-ները:

Երրորդ շրջանը, օր. բարձրագոյն ուսումնարա-նի սրահում կարգացվեցան երկու միմանցից տարբեր դասախօսութիւններ. ա. ֆրանսերէն լեզ-ւի և գրականութեան ուսուցչապետը կարգաց 6 դասախօսութիւններ, այն է «Բանաստեղծները և վիպասանները Ֆրանսիայում 1830—1870», Բ. դասախօսութիւնը կարգաց փիլիսոփայութեան ուսուցչապետը «Հին յունաց կրօնական մտածու-թիւնը և կեանքը ու նրա ազդեցութիւնը ներկա-յիս վրա»: Այս սրահի ղեկավարութիւնը բա-ժանված էր 1) Հոմէրոսի կրօնքը, 2) Սօֆոկլէս և Էսքիլոս բանաստեղծների կրօնական աշխարհայե-ցողութիւնը: 3) Սոկրատ իբրև կրօնական բնաւո-րութիւն: 4) Պլատոն, 5) Էպիկուրեան փիլիսո-փաների կեանքի նպատակը, 6) Ստոիկականները: Այս երկու ուսուցչապետների դասախօսութիւն-ները, որոնք թեւով 12 էին, արժէին 10 ֆրանկ, իսկ բարձրագոյն ուսումնարանի, նոյնպէս և սե-մինարիայի աշակերտահիւնների համար մուտքը ձրի էր:

Աշխարհածանօթ մանկավարժի հայրենակիցնե-րը մուտքայնութեան չէին տուել և նոր սերնդի կրթութեան կարեւոր հարցը: Երկար տարիներից յետ կազմված է մի ընկերութիւն ուսուցիչներից, ուսուցչապետներից և կրթութեան դործին բարե-կամ անձնատուութիւններից, որոնք ամենայն ձը-մեռ ձրի կարգում են մանկավարժական աշխար-հին վերաբերեալ հրապարակական դասախօսու-թիւններ: Այդ դասախօսութիւնները կրում են «Շվէյցարական ուսումնարանական ցուցահա-դէս» ընդհանուր վերնագիրը:

Մտաւոր այս ընդհանուր շարժումից յետ չէ մնում նոյնպէս Յիւրիլի իրական սիւղը, որի ներ-կայացուցիչները իրանց բարոյական պարտաւո-րութիւնն են համարում դիւրացնել և միջոց տալ իրանց սեռի մտաւոր դարգացման առաջա-դիմութեան: Մի քանի տարի է արդէն, որ հիմն-ված է Յիւրիլի կանանց այն ընկերութիւնը, որը ընդհանուր Շվէյցարիայի կանանց միութեան գը-լխավոր ճիւղն է: Այս ընկերութիւնը գտնադա-նում է Յիւրիլի կանանց բարեկրթական ընկե-րութիւններից այն առաւելութեամբ, որ նա իր գլխավոր պարտքն է համարում բացի նիւթական օգնութիւնից՝ իրական սեռի մտաւոր դարգացման և օգնելու: Ընկերութիւնը ունի իր ընթերցարա-նը, որ բաց է ամեն կիրակի ճաշից յետոյ, ուր ամեն ոք ձրիապէս կարող է ընթերցանութեամբ պարագել: Գրադարանը ստանում է նոյնպէս գերմաներէն օրաթերթեր, չաբաթաթերթեր, ամ-սաթերթեր: Իւրաքանչիւր շաբաթ մի անգամ այդտեղ կարգացվում են դասախօսութիւններ բո-լորովին ձրի:

Վերջորդ չէր լինի մի համառօտ ծանօթութիւն տալ այն գեղեցիկ դասախօսութեան մասին, որ

կարգաց այդ ընթերցարանի սրահում բժշկակա-նութեան դոկտօր Կուստէր Գասախօսը մի առ-մի խօսելով յանկարծական դժբաղդութեան դէպ-քերի մասին, երբ մինչև բժշկի զալը չէ կարելի ձեռները ծալած հետել, այլ հարկաւոր է հիւան-դին անմիջապէս օգնութեան հասնել, բայց դժ-բաղդաբար շատ անգամ այդ օգնութիւնը լինելով բոլորովին անհամապատասխան, վտանգի է են-թարկում հիւանդի դրութիւնը և նոյն իսկ նրա մահուան միակ պատճառը դառնում: Ուստի նա առաջարկեց կանանց ընկերութեան հիմնելու ի-րական սեռի համար նոյնպէս մի դասընթացը, ուր յայտնի բժիշկներից կաւանդվէն տարրական գիտելիքներ յանկարծական դէպքերում: մինչև բը-ժիշկի զալը հիւանդին օգնութիւն հասցնելու, որ-պէս զի այն ձեռքը, որ մօտենում է հիւանդին օգնելու, նրա ցաւը դարմանէ և ոչ թէ նրա կեանքը խէ:

Գասախօսը աւելացրեց, որ առաջին անգամ մեծ ուշադրութիւն դարձրեց տգիտութիւնից ա-ռաջացած այս կարիքի վրա գլխավորապէս գեր-մանացի բժշկապետ Էլզմարս, որ և 1881 թ-ին հիմնեց Գերմանիայում մի ուսումնարանական դասընթացը, ուր ինքն բժշկապետ Էլզմարս թէ տեսական և թէ գործնական կրպով աւանդեց այդ բժշկական տարրական գիտելիքները: Անգլիա-յում, Գերմանիայում և Շվէյցարիայում իսկոյն հետեցին նրա օրինակին հիմնելով այդ տեսակ կուրսեր, բայց գլխավորապէս աւելի արական սե-ռի համար: Գասախօսը յայտնելով իր ուրախու-թիւնը, որ կանանց ընկերութիւնը ուրախու-թեամբ յանձն առաւ իրական սեռի համար այդ օգտակար դասընթացը հիմնելու ձեռնեցեու-թիւնը, նա ոգեւորված վերջացրեց իր դասախո-սութիւնը յիշելով անմահ Գեօթէի խօսքերը. «Ե-րբ ազնիւ, ողորմած և բարի»:

Վ. Յ.

ՆԱՄԱԿ ԵՎ ԼԵՑՈՒՄՆԵՐ

—Այսպիսի միջնորդ-նախագահ Սաղաստա պաշտօնապէս յայտնեց, որ նախկին թարգման Ի-գաբէլլա և զուգու Մօսպանիէ անմիջական կեր-պով մասնակցում էին այն խառնակութիւնների և ինտրիգների մէջ, որ դործ էին դնում կառա-վարութեան դէմ: Թէև Մօսպանիէ կը մնայ Ապանիայում, բայց նրա վրա կը լինի մեծ հսկո-րութիւն:

—Անգլիական համայնքների ժողովի կանոնա-դրութեան վերաբնութիւնը արդէն սկսված է: Կանոնադրութեան մի քանի կետերը արդէն փո-փոխութեան ենթարկվեցան: Ընդհանրապէս այդ դործին Անգլիայում ահադին նշանակութիւն են տալիս, քանի որ մինչև այժմ անգլիական ժողո-վրդի ներկայացուցիչները շատ դժուարութեամբ էին համաձայնվում փոփոխութեան ենթարկել անգլիական սահմանադրութեան աւանդական կանոնները: Նոր փոփոխութիւնները մասամբ և ձեռնտու են այժման պահպանողական միջնոր-րութեան, բայց ապագայում պարզամտական այդ նոր կանոնները կը նպաստեն ուրիշ ուղղու-թեան հարցերի շուտափոխ մովելու, որը շատ չէ ցանկալի չէ կարող լինել ամեն մի պահպան-դական միջնորդութեան համար:

—Ինչպէս հեռադրում են ֆրանսիական լրա-գիրներին, Վոբուրգեան պրինցը Սօֆիայից մօտիկ յարաբերութիւններ է սկսել վիէննայի հետ: Կարծում են, որ Վոբուրգեան պրինցը իր ապա-գայ ընթացքի մէջ կը հետեւ աստորիական քա-ղաքականութեան ցուցմունքներին:

—Անգլիական «Observer» լրագիրը խօսելով արեւելեան հարցի մասին, խորհուրդ է տալիս անգլիական կառավարութեանը հեռու մնալ արե-ւելեան հարցի, մասնաւոր բոլորարական հարցի մէջ խառնվելուց:

—Վիէննայում լուրեր են պտտում, որ իբրև թէ Լոնդոնից հաղորդված է Բ. Դրան, որ Անգլի-ան, համաձայն իր նախորդ պայմանագրերի պատրաստ է հարկաւոր ժամանակը պաշտպանելու Օսմանեան կայսրութիւնը:

—Հիմնվելով Բեռլինից եկած վերջին հեռագրի-ները վրա, առիթ կայ կարծելու, որ Ֆրիդրիխ III-ը կայսրութեան ժամանակ իշխան Բիսմարկ կը հեռանայ գերմանական կայսրի պաշտօնից:

—Թուրքից արտասահմանեան մի հայ լրա-գիրն գրում են հետեւել: «Բողոքական միսիօնար-ները դործը առաջ չէ դնում Ատրպատականում. Միլիթարեանց եպիսկոպոսը դրն է իր իշխա-

նութեան տակ դնելով բոլոր գաւառների քահա-նաներին թոյլ չը տալ ոչ ոքին դիմուկ բողոքա-կանութեան. և եթէ այսօր ունեն բողոքականնե-րը մի քանի աշակերտներ, նրանք նախկին ա-ռաջնորդների ժամանակվանից են, թոյլակ են ստանում և գիշերօթիկ են»:

ՆԱՄԱԿ ԵՎ ԼԵՑՈՒՄՆԵՐ

Պոլսի հայոց լրագիրներից մէկի մէջ, այն էլ «Ազ-գային լուրերի» բաժնում կարդում ենք հետեւեա-լը «Հարանիք» վերնագրով. «Երեկ զիշեր, շքեղ հանդիսիւ, կատարուեցաւ, ի Գատը դիւղ, Եօր-տամեան Աւետիս Էֆէնտիի բնակարանին մէջ, փաստաբան Գրիգոր Էֆէնտի Չօհրապի ամուս-նութիւնն ընդ Ազն. Գլարա Օրիորդի Ելազնեան, կնքահայրութեամբ Հարնից Գաւառի Էֆէնտիի Պետիկ արարողութեան կը նախագահէր գեր. Սի-մէն եպիսկոպոս Սէֆէրեան, շուրջն ունենալով գիւղին արժ. քարոզիչ և քահանայից դասը Ա-մին. Ս. Պատրիարք Հայրն. որ հրաւիրեալ էր, բարեհաճած էր իւր հայրական օրհնութիւնները զրկել նորապաւկ ամուսնացելուց և բոլոր հան-դիսականաց: Դիւղայ էին Գատը դիւղին և այլ գիւղերէ բազմաթիւ հայ ընտանիքներ, բարձրաս-տիճան անձինք ընդ որս և օտարազգի պաշտօ-նատարը դատական նախարարութեան և այլք: Ցասնի չափ գեղեցիկ պատկեր դրուած էին դա-նաղան կողմերէ: Այսպիսի ողևորված նկարա-գրութիւններ Պոլսի լրագիրները «Ազգային» բաժ-նում սովորապէս են փորձի վրա հիմնված կարող ենք սպասել, որ շուտով նոյն լրագիրների աղա-սին լուրերի բաժնում կը կարգաւոր հետեւեալը. «Երեկ, ի Գատը դիւղ, թաղական եկեղեցուն մէջ, կնքահայրութեամբ Գաւառի Էֆէնտիի և ներկա-յութեամբ Սիմէն եպիսկոպոսի, որ շուրջն ունէր թաղին արժ. քարոզիչ և քահանայից դասի, կա-տարուեցաւ Գրիգոր Էֆէնտի Չօհրապի և Ազն. տիկին Վլարայի սիրայի ամուսնութեան պատու՝ մանուկի մկրտութեան հանդէսը: Մանկանը չը-նորհվեցաւ Գրիգորեան անունը: Ստացվեցան շատ շնորհաւորութիւններ և ձերմակեղծներ: Երե-կայ եղողը յոյժ զգացվեցան այն ճիւղերն, զոր աշխարհ մտնողը կարճակէր, երբ դնա ընկզմունքն աւազանի ջրի մէջ: Հանդիսատես աղայաններէն շատերը իրաւացի կը նկատէին, որ այդ նշան է, թէ աղգասէր ծնողաց անդրանիկ զաւակը ժամա-նակով հոգակաւոր աղագասէր մը պիտի ըլլայ, և սրտանցիկ ճիւղի պիտի արձակէ աղգային իրա-ւանց պաշտպանութեան համար»:

Ոն' ուրեմն, կեցցեն Պոլսի աղգայինները....

Միջազգային փոստային մարկաներ գործածելու հարցը նորից յարուցվել է թէ Անգլիայում և թէ Գերմանիայում

Բեռլինում յայտնի մի մասնագէտ, այս օրերս կարգաց մի գեղեցիկ, որով աշխատում էր ա-պացուցանել, որ գերմանական թաղածառայի կոկորդի հիւանդութեան պատճառը անգլիական լե-զուի գործածութիւնն է: Ցայտնի է, որ թաղա-ժառանգը, որ այժմ արդէն Գերմանիայի կայսրն է Ֆրիդրիխ III անունով, ամուսնացել է անգ-լիական թագուհու աղջկայ հետ: «Ֆրիդրիխը,— ասեց գեղեցիկապէս,— իր ամուսնութեան օրից սկսած, իր ընտանիկան չըլնաւ միշտ անգլիե-րէն է խօսում Այդ լեզուի գործածութիւնը մեծ ազդեցութիւն ունի կոկորդի և չնչափով վրա է-թէ անգլիացիք չեն վերափոխում այդ լեզուի գո-րծածութիւնից, այդ պիտի պատճառով է, որ նորա սովորութիւնն ունեն աւելի լեզուի քան թէ խօսե-լու:» Զեկուցանողը իր ունկնդիրներին կրկնել անդ-լիերէն լեզուի մէջ շուտ-շուտ էմ ձայնը, համոզ-վելու համար թէ ողբան այդ ձայնը յորհեցնում է կոկորդի մկանները: Իսկ թաղածառանդը, աւելացրեց գեղեցիկապէս, այդ էմ ձայնը կրկնում է միլիոնավոր անգամ: Ունկնդիրները ծափահա-րեցին սրտով գերմանացուն, որի կանխիկով գերմանացաց այժմեան կայսրի հիւանդութեան պատճառը անգլիական լեզուն է....

ՄԵՐԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Հիմնադրուած Գործաւարտ Լուսնի

ԲԵՐԼԻՆ, 29 փետրվարի: «Պետական համա-լարերի» մէջ տպված է հետեւեալ լուրերը, փե-տրվարի 29-ից «Կայսրը ցաւ չէ դրում, չնառու-թիւնը կատարվում է անարդի կերպով»: «Հիւսիսա-յին գերմանական ընդհանուր լրագիրը» գրում է որ իշխան Բիսմարկի վրա շատ մեծ ազդեցու-թիւն է դրեց կայսրի մահը. չնչափաների ցաւը վերանորոգից: Կանցլերին անհրաժեշտ է հանգս-տութիւն:

ՊԵՏԵՐԲՈՐԿ, 1 մարտի: Կառավարական հա-ղորդագրութիւն. Վիէննայի կայսրի թաղման պատ-ճառով, Թագաւոր Կայսրը բարեհաճեց այդ տը-խուր հանդիսին ներկայ լինել յանձնել Թագա-ժառանգին: Նորին Բարձրութիւնը առաջին ան-գամն է պարտաւորվում արտասահման դնալ իր-ն ներկայացուցիչ իր Օգոստոսիա Միստի: Բա-

